ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 05

/գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ/

«21» փետրվարի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչության պետի տեղակալ Աղասի Աղայանս, ուսումնասիրելով «ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02881748, հասցեն՝ ՀՀ, ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի փող., 27 շ., բն. 37, տնօրեն Վլադիմիր Էդուարդի Շաքարյան) կողմից վճարման ենթակա մաքսային վճարների գանձման նպատակով հարուցված վարչական վարույթների նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերության անվամբ թիվ 05100022/131123/0036325 և թիվ 05100022/151123/0036586 տարանցման հայտարարագրերով ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժնով ՀՀ է ներմուծվել ընդհանուր 2,832 տեղ, 53,218.94 համաքաշով և 50,976 կգ զտաքաշով բեռ՝ խոզի սառեցված քառորդ ազդրամիս, որը 24.11.2023թ. ՀՀ ՊԵԿ թիվ /8-4/68319-2023 և 15.11.2023թ. ՀՀ ՊԵԿ թիվ /8-4/68679-2023 գրությունների համաձայն տեղափոխվել է հայտարարատուի կողմից վարձակալած տարածք /ՀՀ, ք. Երևան, Արին Բերդի 12/ և հանձնվել պատասխանատու պահպանության: 2023 թվականի դեկտեմբերի 01-ին ՀՀ ՊԵԿ Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչության բացթողնման բաժնի աշխատակիցների կողմից հայտարարատուի վարձակալած նշված տարածքում բեռի զննության արդյունքում պարզվել է, որ վարձակալած տարածքից վերը նշված բեռն ամբողջությամբ բացակայում է:

ՀՀ ՊԵԿ Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչության ՓՀ և ԳՀ բաժնի կողմից 12.01.2024 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ «ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերության կողմից փաստացի բացակայող 53,218.94 կգ համաքաշով և 50,976 կգ զտաքաշով ապրանքները «Ներքին սպառման համար բացթողում>> մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում 01.12.2023թ. դրությամբ կառաջանար ընդհանուր 25,983,543 ՀՀ դրամ, որից ապառք՝ 25,554,232 ՀՀ դրամ, տույժ՝ 429,312 ՀՀ դրամ:

Մաքսային վճարների գանձման նպատակով հարուցված վարչական վարույթի նյութերում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերության կողմից մինչ օրս չի վճարել 25,983,543 ՀՀ դրամի չափով մաքսային վճարները, չի տրամադրել մաքսային վճարների վճարման որևէ երաշխիք, ուստի առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ընկերությունը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարչական ակտի կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնել «ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերությանը պատկանող գույքի և դրամական միջոցների վրա՝ **25,983,543 (քսանհինգ միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամի** չափով:
2. Որոշման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկել «ՍՎ Իմպորտ» ՍՊ ընկերությանը:

3. Որոշումն ուղարկել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ կատարման:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՔՍԱՏՈՒՀ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՂԱՍԻ ԱՂԱՅԱՆ**